44рդ ՏԱՐԻ — ԻԶՄԻՐ ՇԱԲԱԹ 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1883 — Թիւ 1229

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Հատը 3 մէթալիք Իզմիրի մէջ | ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ | Դուրսերը 4 մէթալիք Հատը

Ց. Պ. ՍՎԱՃԵԱՆ
Համարատու—Տնօրէն

ՏԱՐԵԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Իզմիր	Օսմ. ոսկի	1
Դուրսը	Մէճիտիյէ	6
Օտար երկիր	Ֆրանք	25

ԾԱՆՈՒՑԱԳԻՆ

3	դրուշ տողը	Մէկ անգամ
2	դրուշ	Երկու անգամ
60	փարա	Երեք անգամ

Գ. Գ. ՊԱԼԹԱՃԵԱՆԸ
Հիմնադիր

Խ. ԴԵՐՁԱԿԵԱՆ, կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վերաբերեալ բոլոր գործերը։ Բուպիյէ–Պէյէսթէն

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ կը վերաբերի, տնօրէնին կը ղրկուի։ Սէվգի խան թիւ 17

ԻԶՄԻՐ

Շաբաթ, Սեպ. 28/10 Հոկ.

Սվէլթանա անուն ռուս մարտանաւը կիրակի օր մեր նաւահանգիստը հասաւ, փոխ–ծովակալ Զիմպաչօֆի հրամանատարութեան ներքեւ։

Առջի օր հրամանատարն ընկերակցութեամբ տեղւոյս ռուս. հիւպատոսին՝ այցելութեան գընաց Վսեմ. կառավարչին։

—

Կ'իմանանք թէ Եահեա Հայիթի էֆէնտի, Օսմանիէի երրորդ կարգի շքանշանաւ պատուուած է։

—

Տեղական թերթ մը կը ծանուցանէ թէ, կիրակի օր Հաճըլարի կողմերը քանի մը որսորդներու խմաց կը տրուի թէ, Սարը–Քաեայի և Քասթրոյի մէջ տեղ եւ տիք ըսուած տեղը հինգ աւազակներ կը գտնուին։ Այս աւազակաց չորսը ալպանիացիի հագուստ կը կրեն եղեր, որ կարելի է իրենց բուն հագուստը չէ և ծպտեալ են։

—

Երէկ Շիչէֆիլէր–Իչի ըսուած փողոցին մէջ տաճիկ մը կողոպտուեցաւ քսակահատի մը կողմէ։ Գողցուած քսակին մէջ կը գտնուին եղեր քանի մը ոսկի, երեք մէճիտ և մարդուն կնիքը։

—

Շաբաթ գիշեր յաւալի դէպ մը պատահեցաւ Մալթէզ փողոցին տան մը մէջ։

Օրիորդ մը, գիշերուան ժամը 11ին միջոցները ուզելով մեքենայով կար կարել, քարիւղով լի լամպար մը կը դնէ մեքենային վրայ։ Դիպուածը կը բերէ որ լամպարը կ'իյնայ դժբաղդաբար և իւղը բռնկելով բոյն իսկոյն կը ճարակի։ Օրիորդն ուզելով բոյն անցունել, վրան կը կոխէ, և դժբաղդաբար իր անխոհեմութեան զոհ կ'երթայ, վասն զի շրջազգեստը կը բռնկի իսկոյն։ Թշուառ աղջիկը սարսափահար դէպի փողոց կը վազէ օգնութեան կանչելու։ Այս շարժումն աւելի կը գրգռէ բոցին արագութիւնն ու կատաղութիւնը և վերջապէս, թէև քոյրերն ու դրացիք կը հասնին իր օգնութեան, սակայն ի զո՛ւր, անկարելի կը լլայ անբաղդ աղջիկն ազատել այս սոսկալի պատուհասէն և երկու ժամվերջը հոգին կ'աւանդէ անտանելի ցաւերու մէջ։ Ողորմելի աղջիկն հապիւ տասներեք տարեկան հասակն ունէր։

Այս առթիւ արժան է, որ յիշեցուենք մեր ընթերցողուհեաց զգուշութիւն ընել միշտ՝ քարիւղով ճրագ գործածած ատենին, վասնզի առաջին անգամ չէ որ այս տեսակ ցաւալի եղելութիւններ կը պատահին։

—

Հայոց գերեզմանատան պահպանը, Հաճի Կարապետ անուն, զոհ կերթայ նոյնպէս անխոհեմութեան մը։

Երկուշաբթի օր, ժամը երեքին միջոցները, ուղելով գերեզմանատան մէջ դանուող չոր խոտերը մաքրել՝ կրակ կուտայ անոնց, և հովը սաստկօրէն փչելով բոցը կը ծաւալի յանկարծ և պահապանին վարտիքը կ'ըռնկի։ Գերեզմանատան մէջ գտնուող ուրիշ անձ մը թէև կը վազէ օգնութեան հասնելու, սակայն կ'երեւի թէ անգութ տարը ոչ նուազ պատուհաս մը ըսպառնացած է օգնութեան հասնողին, որ տեսնելով թէ ձեռքերը կը սկսին այրիլ և չ'յաջողիր պահպանին հագուստները հանելու, դէպի դուրս կը վազէ և օգնութիւն կը դոչէ։ Մօտը գտնուող գործաւորներ թէև կը հասնին, բայց արդէն մահամերձ վիճակի մը մէջ կը գտնեն զոհը, որ վերջապէս կը մեռնի նոյն գիշերը։

—

Շաբաթ իրիկուն Դարա–Թաշ արուարձանին մէջ փոքրիկ տղայ մը կառքի մը տակ մնալով կը մեռնի։

Ոստիկանութիւնը նոյն տեղ գտնուող կառապաններէն քանի մը հոգի կը ձերբակալէ քննութիւն ընելու համար։ Կ'երեւի թէ տղան սպաննող կառքին կառապանը որոշ չգիտցուիր։ Զարմանալի չէ այս, վասնզի հասարակութեան մէջ կը գտնուին տեսակ մը մարդեր, որք այս տեսակ պարագայից մէջ կուզեն ծածկել գործը՝ յանցապարտը չմատնելով ոստիկանութեան, կարծելով թէ մատնութիւն մը ըրած կը լլան։ Եւ սակայն այդպիսի անխոհեմ կառապանի մը՝ վայել է պատիժ, ի զգաստութիւն այլոց. վասնզի քաղաքիս կառապանները գրեթէ ամենքն ալ ունին այդ յանդգնութիւնը։ Ամենեին հոգ չ'են ըներ թէ վտանգ մը կը պատահի կառքերնին որքան թոյլ վազցուցած ատենին։ Հոս՝ տեղն է ըսել թէ, ձեռնհաս իշխանութիւնը հարկ է որ միջոցներ ձեռք առնէ։ Քարափին վրայ բազմութեան խռնած ատեն կառքերուն սանձարձակ վազցուելուն դէմ, ըստորում աս ու ան շատ հեղ անոնց տակ ճզմուելու վտանգին կ'ենթարկուին, միշտ կառապանաց անխոհեմութեամբ։

—

Կիրակի օր երկու հրդեհ պատահեցաւ, մին Մբոբրը օղլու խանի մէջ, ուր 500 ոսկւոյ վնաս ծագեցաւ, և միւսը Եօքարը—Մահալլէ, ուր ինչան աննշան է։

Երկուշաբթի օր ևս հրդեհ պատահեցաւ Մէսուտիէ փողոցին մէջ, և երկու տուն այրեցան։

—

Այս օր կէսօրը քանի մը վայրկեան անցնելով երկրաշարժի արագ և սաստիկ ցնցում մը ըզգացուեցաւ քաղաքիս մէջ։

ՆԵՐՔԻՆ

Հաղիւագիտ լրագիրը կ'իմանայ թէ, օսմանեան կառավարութեան և Գարատաղի մէջ դաշնադրութիւն մը կնքուած է քաղաքական յանցապարտներն ետ տալու համար։

— Մօնիթէօր կըսէ։—Դատավարական վարչութեան մէջ, քանի մը բարենորոգութիւններ ներմուծելու հարկաւորութեան վրայ խօսելով՝ Վագրթի դիտել տուած էր թէ Կ. Պոլսոյ վճռաբէկ Ատեանի (Տիվանը Թէմիզ) մէջ երեք հազարի չափ գործեր դիզուած և երեսի վրայ մնացած են։ Մեր պաշտօնակցին այս դիտողութիւնը կ'երևի թէ կառավարութեան ուշադրութիւնը դրաւեց, վասն զի բարձրագոյն հրամանաւ յիշեալ Ատեանին գրագիրք եւայլպաշտօնեայք երկու օրէ իվեր սկսած են ցուցակ մը պատրաստելու որու մէջ նշանակուած են Ատեանին ուղղուած գործոց թուղթերուն թիւերը, թուահամարները և թուականները։

Վագրթի ըսածը չափազանց չէր, վասնզի կըսուի թէ Ատեանին մէջ ասանելիկի տոպրակ լեցուն թուղթեր կան, որոց շատը մէկ տարիէն աւելի է որ ներկայացուած են Ատեանին, և տակաւին ոչ ոք քննած էր զանոնք։

— Պօլսոյ թերթերը կը ծանուցանեն թէ, Ֆեքտարայէն հասնող վերջին լուրերը կ'իմացուցեն, որ ամբողջ դաւառին մէջ կատարեալ հանդարտութիւն կըտիրէ։ Ժողովուրդն ըսկսած է զինաթափ ըլլալ։ Գարատաղի սահմանադրութիւնը ներկայ ամսոյս վերջը պիտի լրանայ։ Գարատաղի իշխանն հրաման ըրեր է արդէն որ Տաճկաստանի ետ տրուելիք տեղերը ժամ առաջ պարպուին։

— Կըսուի թէ օսմանեան պետութեան մէջ հրատարակուող գրեանց համար, տպագրական նոր օրէնք մը պիտի խմբագրուի Հանրային կրթութեան պաշտօնատան մէջ։ Այդ օրէնքը բաւական ընդարձակ ազատութիւններ պիտի տրամադրէ և թոյլ պիտի տայ շատ գրագէտներու որ իրենց երկերն ի լոյս ընծայեն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հավասի գործակալութիւնը հեռագիր մը կը հրատարակէ Բէթէրզպուրկէն, ըսելով։—Պուլկարիոյ վերաբերութեամբ Բէթէրզպուրկի լրագրաց կողմէ հրատարակեալ յօդուածներուն անհաճոյ տպաւորութենէն, հոս յայտնուեցաւ որ, Պուլկարիոյ խնդիրին մէջ Ռուսիոյ քաղաքականութիւնն՝ է և պիտի մնայ միշտ խաղաղական։

Հիմնովին սխալ կը հանուի այն գրոյցը թէ, Ռուսիա՝ Պուլկարիոյ գահուն համար ուրիշ ընտրելիներ առաջարկել խորհած ըլլայ։ Կը յաւելուն թէ Ռուսաստան կուզէ Պուլկարիոյ մէջ տեսնել՝ հանդարտութիւնն ու խաղաղութիւնը։ Ասկէ զատ կըսեն նաև թէ, Ռուսաստան աւելի լաւ կուզէ որ, Պուլկարիոյ իշխանը համաձայնութեամբ ընդունուած ծրագրին հետևի, բայց կատարելապէս զոհ պիտի ըլլայ (Ռուսաստան) եթէ Սոֆեայի կառավարութիւնը ուրիշ միջոցաւ մը յաջողի երկիրն տաղտել տեղական կերպով, քաղաքական տագնապներէ։

Հոմպուրկի մէջ Ալմանիոյ կայսեր, Սպանիոյ, Սաքսի և Սերպիոյ թագաւորաց արքայական հացկերոյթին ժամանակ կայսրն հետևեալը խօսած է։—Այս տեղ ներկայ գտնուող իշխանաց համահաւանութեամբ, որք մեաստաներորդ զօրագնդին զինուորագրեցին ներկայ գտնուելու փափաք յայտնեցին և զօրաբանակաց նկատմամբ խիստ գովեստիք խօսեցան այս առտու, բաժակ կը պարպեմ նոցին վերհափառութեանց Սպանիոյ, Սաքսի և Սերպիոյ թագաւորներուն կենացը։»

Սպանիոյ թագաւորն ալ պատասխանած է։—Թէև հոս ներկայ գտնուող թագաւորաց ամենէ փոքրն եմ տարիքով, բայց ամենէ հին միապետութիւնը կը ներկայեմ և այս յատկութիւնովս։ կաղաչեմ Ձեր վեհափառութիւնը որ բարեհաճի թոյլ տալ ինձ բաժակ պարպել մեծափառ և սիրելի կայսեր կենացն Ալմանիոյ, իր բանակին և իր պետութեան։

Ռումանիոյ նախարարապետ Պ. Պրաթիանօ որ Վիէննա կը գտնուի Աւստրիոյ կայսեր ներկայացաւ և քանի մը տեսակցութիւններ ունեցաւ Ֆալնոքի կոմսին և Վիէննայի Ալմանիոյ դեսպան Ռէօս իշխանին հետ։

Սթանտարտ այս մասին հետևեալը կը հրատարակէ, Վիէննայէն առնելով։— Վիէննայի հաշտասէր մամուլը կըսէ թէ, Ռումանիոյ՝ Աւստրօ—ալմանիական դաշնակցութեան հետ յարաբերութեանց համար եղած բոլոր բանակցութիւնք պիտի վերջանան։

Գլխաւոր դժուարութիւնը կը կայանայ ձև մը գտնելուն մէջ, ձև մը՝ որ Ռումանիոյ ժողովրդեան անհաճոյ չընէ նոր քաղաքականութիւնը։ Ռումանիոյ կառավարական շրջանակները միշտ պահեցող են։ Պահպանողականք կը կասկածին Պ. Պրաթիանոյի անկեղծութեան վրայ, թէպէտև կեդրոնական Եւրոպայի տէրութեանց հետ համաձայնութեան համար եղած իրողութիւններն ու պատճառները կը ճանչեն։

ՀԵՌԱԳԻՐ

Բարիզ, 6 հոկտեմբեր։

Հաւանական է, որ զօրապետ Սոսիէ, հրամանատար 19րդ զօրաբանակին (Ճէզայիր), պատերազմական գործոց նախարար պիտի կոչուի։

Զօրապետ Թիպոտէնի հրաժարման հետևանքն եղաւ, Ֆրանսայի և Սպանիոյ մէջ յարաբերութեանց ճգտումը։

Բարիզ, 6 հոկ,

Ծովային գործոց նախարար, ամիրալ Փէյրոն, առաժամանակեայ կերպով պատերազմի գործոց նախարար նշանակուած է։

Սայկոն, 5 հոկ.

Սեպտեմբեր 28 թուով Հանոյիէն հասած լուրերը կըսեն թէ Բավիլիոն–Նուաները, հիւանդութենէ և պատերազմի մէջ տուած կորուստներէն սպառելով, մեծ փոյթով ետ կը քաշուին։

Բէթէրզպուրկ, 6 հոկ.

Ժուրնալ տը Սէն–Բէթէրզպուրկ կը հերքէ Անգլիացի թերթերուն հրատարակած այն լուրերը՝ թէ Ռուսաստանի մէջ դաւադրութիւններ եղած և սպաներ ձերբակալուած ըլլան։

Պէրլին, 6 հոկ.

Կաղի Մուխթար բաշա Ֆրայտրիխշրուհէ գնաց Պիզմարք իշխանին այցելութիւն տալու համար։

Լոնտրա, 6 հոկ.

Այս առտուան լրագիրը յօդուածներ կը հրատարակեն, որոցմով միաձայն կը յանձնարարեն Սպանիոյ որ, շատ չսղնդէ Գաղղիոյ կառավարութենէն պատիւ պահանջելուն վրայ, իմաստին այն նախատանաց զորս կրեց Ալֆոնս թագաւորը Բարիզէն անցած միջոցին։

Բարիզ, 5 հոկ.

Կը հաւատան թէ, Սպանիոյ կառավարութիւնը դոհ եղած է միայն բերանացի դիտողութիւններ ընելով՝ Գաղղիոյ կառավարութեան, այն պատահարաց համար, որք տեղի ունեցան Ալֆոնս ԺԲ թագաւորին Բարիզէն անցած միջոցին։

ԱԶԳԱՅԻՆ

—

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ահաւասիկ Վսեմ. Ստեփան բաշա Ասլանեանի նամակը, զոր նախորդ թիւով խոստացած էինք հրատարակել։

Գահիրէ 15/27 Սեպտ. 1883

. . . Խմբագիր Արշալոյս–Արարատեան, Զմիւռնիա.

Տէր իմ,

Ձեր պատուական լրագրոյ օ. գոստոս 27 ի 1220 թուահամարաւ թերթին մէջ նամակ մը կը տեսնուի «Եգիպտոսի ազգային գործերը» վերնագրով, և եռաստեղեան ծպտեալ ստորագրութեամբ, զոր դուք «Գահիրէի հասարակութեան մէջ իշխանութիւն համարուող հեղինակներ» խօսքով անուղղակի կը բացատրէք։

Սոյն նամակի կամիմ պատասխանել, ո՛չ թէ բանակռուի ծագում տալու, և ազգային գործերն ու գործողներն 'ի հրապարակի երկրաքարշ ծանակելու դիտմամբ, այլ պարզապէս եղելութիւնները ճշդելու և հասարակաց կարծիքն մոլորմանէ ազատ պահելու համար։ Ձեր անաչառութենէն կը յուսամ որ ըստ օրինի պատասխանս կը զետեղէք պատուական լրագրոյդ մերձաւորագոյն թիւերէն մէկուն մէջ։

Ձէ ինձ վայել պաշտպան կանգնիլ ազգային Պատրիարքարանի և զայն ի չքմեղս հանելու ճգնիլ Եգիպտական ազգ. խնդրոյն կարգադրութեան համար ըրած վերջին տնօրինութեան նկատմամբ, որ է ինձ յանձնումն ազգային պատուիրակութեան պաշտօնին։ Ապաքէն Վսեմափայլ Նուպար փաշայի ձեռքն սոյնպիսի պաշտօն մը անմիջական արդեամբ կ'արգասաւորէր, և այսօր թերեւս պարտք անհետացած էին և օրէնք սկսած էր թագաւորել Եգիպտաբնակ մերազնեայց վրայ։ Բայց միթէ վսեմափայլ փաշան կ'ընդունէ՞ր և կ'ընդունի՞ սոյն օրինակ ազգային պաշտօն մը. ես չեմ կարծեր, բայց եթէ պատուարժան քննադատս կը յուսայ թէ այո՛, լաւագոյն է անագան քան երբէք, թող ըսկըսի հարկ եղած հնարքն ու ջանքն ընելու, ես պատրաստ եմ սիրով և ակնածութեամբ յանձնել Ն. Վսեմութեան ձեռքն այն պաշտօն որ արդի վիճակիս մէջ ո՛չ սակաւ կը ծանրանայ իմ վրայ։ Բայց սակայն ի՞նչ որ ալ ըլլայ արդիւնք երկոց պատուարժան հակառակորդիս, պատկառանաց դէմ է և նշան կատարեալ անգիտութեան վեհ Հայուն վսեմ ոգւոյն՝ կարծել և ըսել թէ «Վսեմ. Նուպար փաշա արհամարանօք պատասխանեց Ազգ. Պատրիարքարանի տընօրինութեան, և իրեն ազգային պատուիրակութեան պաշտօնն չ'յանձնուելուն համար, ինքն ալ սակաւ ողորմութիւն չնորհեց աղքատաց, 'ի դէպս վերջին համաճարակ գօլերայի»։

Դալով Պատրիարքական կոնդակաւ ինձ տրուած առժամեայ իշխանութեան, որոյ տեղական կառավարութեան կողմէն, արդելք եթէ պատահին, տբխրութեան քան թէ ուրախութեան պէտք է առիթ տան պատուարժան նամակագրին, եթէ հայ է և ողջամիտ, նա ո՛չ ինչ կը պարունակէ վնասակար ազգ. յառաջադիմութեան և սահմանադրական զարգացման, զի չէ կատարելապէս ինչպէս կ'ըմբռնէ և կը բացատրէ մեր հակառակորդը. ահա՛ հրահանգաց պատճէնը. տեսէք և դատեցէք։ — Ազգային պատուիրակն պա՛տի

1⁰. Քննել Եգիպտոսի ազգային բոլոր գործերը, թէ՛ ի Գահիրէ և թէ՛ յԱլէքսանդրիա.

2⁰. Կարգադրել Գահիրէի դատական գրաւմանց և պարտուց վերաբերեալ խնդիրներն ազգային շահուց համաձայն, և իրաւախոհութեամբ՝ եթէ հնար է և օգտակար.

3⁰. Ազգային կալուածներն ու հասոյթները փրկել գրաւումներէ, որոց ենթարկեալ են.

4⁰. Ազգին պատկանեալ դրամներն հաւաքել 'ի դրամարկեղ վարչութեան, և բանալիքն ու բոլոր ազգային պաշտօնագրերն ապահովել իր տրամադրութեան ներքեւ.

5⁰. Եւ զկնի հաստատելոյ խաղաղութիւնն և բարեկարգութիւնն 'ի Գահիրէ, նոր վարչութիւն մը կազմել, վարչութիւն գաւառական, ըստ ազգային օրինաց, որոյ իրաւասութեան ներքեւ պիտի գտնուին առաջնորդական գործոց տնօրինութիւնն, ազգային եկեղեցւոյ մատակարարութիւնն, վարժարանի հոգաբարձութիւնն, աղքատաց խնամակալութիւնն, որոյ հետ սիրայօդ շաղկապեալ պիտի ըլլայ Ա. Լէքսանտրիոյ թաղական մատակարարութիւնն, և որ պատասխանատու պիտի լինի գաւառական ընդհանուր ժողովոյ միջոցաւ առ ազգային կեդրոնական վարչութիւնն, 'ի Պատրիարքարանն Կ. Պոլսոյ.

6⁰. Վերջապէս պատեհ ժամանակին առաջնորդի ընտրութիւնն կատարել տալ.

Բայց է՞ր կը չռայլէ Պատրիարքարանն այսքան բայարաձակ և ընդարձակ իշխանութիւն առ իւր պատուիրակն. — Պատրիարքական կոնդակը կ'պատասխանէ, «վասնզի Եգիպտոս տասնեակ տարիներէ հետէ ամէն տեսակ անկարգութեանց և ղեղծմանց ասպարէզ դառնալով, այսօր ցաւ ի սիրտ կը տեսնուի թէ Գահիրէ և Ալէքսանտրիա առանց որ և է հաղորդակցութեան կը վարին, և Գահիրէի մէջ անմիութիւնն և պառակտմունք աւելի յառաջ գնալով, ազգ. մանկաւոյն դաստիարակութեան խնամքն՝ ազգ. եկեղեցւոյ հոգաբարձութենէն զատ, և գաւառական վարչական գործոց տնօրինութիւնն ասոնցմէ զատ, առանձին և անկախ մարմնոց ձեռք մնացեր են. և որ աւելի ցաւալին է, կալուածոց տնտեսութիւնն մէկն իւրացուցեր, դրամն մէկ ուրիշին ի պահ տրուեր, արկեղ բանալին երրորդ մ' առեր է, այնպէս որ կատարեալ անիշխանութիւն և նորա հետեւանք ամենայն չարիք կը տիրապետեն Եգիպտական հայկազն հասարակութեան վրայ».

«Վասնզի Պատրիարքարանն՝ մի քանի տարիյառաջ Արժ. Տէր Յովհաննէս Մկրեան Աւագ Քահանայն յ'Եգիպտոս ղրկեր է իբր քննիչ, գործոց վիճակն ստուգելու, և չարեաց պատճառներն գտնելով դարման տանելու համար, բայց կատարեալ արդիւնք մը չէ կրցեր ստանալ։ Յետոյ առաջնորդական Տեղակալ կարգեր է զ'Արժանապատիւ Տ. Սահակ Տ. Սարգիսեան Աւագ քահանայն, որպէսզի խռովութեանց բարձմամբ և տեղական ազգ. գործոց կարգադրութեամբ՝ առաջնորդական բարեկարգութեան վերահաստատութիւնն պատրաստէ, սակայն դարձեալ չէ յաջողեր։ Անմիաբանութիւն, ատելութիւն, խռիւ և կագ զանազան կուսակցութեանց երկոցուն եւս ջանքերն ապարդիւն սպառեր են».

«Վասնզի ահագին դատ մը՝ որ ժողովրդեան անտարբերութենէն և առաջնորդի մը գթութեան ոգի չ'կրելէն ծնունդ առնելով, աճեր, զօրացեր և ջախջախիչ վճռոյ մը յանգեր է, Գահիրէի ազգ. կալուածներն արդելքի ներքեւ և եկամուտներն գրեթէ ամբողջ պահանջատերոց տրամադրութեան ներքեւ դնելով, եկեղեցի, վարժարան, Աղքատներն և առաջնորդարան յետին չքաւորութեան մատներ և կոստեան վանդի մերձեցուցեր է».

«Վասնզի սոյն վիճակն այլ ևս անհանդուրժելի, ինքնին ուղղուիլն անկարելի և վախճանը սոսկալի լինելով, զօրաւոր, տոսոլոր և ազդեցիկ տնօրինութեան մը դիմել հարկ տեսնքուեր է».

«Ըստ որում Ս. Պատրիարքը անձամբ յԵգիպտոս դալ և ժողովուրդը իւր շուրջը բոլորելով՝ բարեկարգութիւնը վերահաստատելու թէպէտ կամք և փափաք ունեցեր է, բայց Պատրիարքական ծանրածանր զբաղմունք չեն ներեր նմա զայս», և

«Ըստ որում նոր քննիչ մը յղելու համար, ո՛չ կեդրոնի երկիմաստական կացութիւնք և ո՛չ Գահիրէի տնտեսական վիճակն բաւական և կարող դատուեր են այսպիսի առաքելութեան մը ծախքը հոգալու»,

«Ուստի ի հարկէ բռնադատեալ Պատրիարքարանն պարտաւորեր է Գահիրէի մէջ մէկը դտնել որ ընիկ չըլլայ, բայց անդ հաստատուած բնակութեամբ. տեղական հանգամանաց գիտակ ըլլայ, բայց կուսակցութեանց մէջ մասն չունենայ. ընկերական պատուաւոր դիրք մ'ունենայ և կարենայ ու կամենայ աշխատիլ յօգուտ ազգին առանց որ և է վարձատրութեան ակնկալելու, վերջապէս տերութեան վարչական օրինաց տեղեակ, միանդամայն ազգային սահմանադրական կանոնաց հմուտ լինի. և զայս ամենայն յանձին իմում դտնել կարծելով, ինձ յանձներ է պատուիրակութեան պաշտօնն՝ բաւական ընդարձակ արտօնութեամբ, որպէսզի եգիպտական մերազնեայց վիճակն ազդեցիկ և ստիպողական տնօրինութեամբ փութանակի ի բարեկարգութիւն վերածելու հնար ըլլայ առանց մոռնալու չափ և սահման դնել սոյն իշխանութեան այն պայմանքն որով «Պատուիրակն պարտաւոր է իւր բոլոր գործառնութեանց և տնօրինութեանց վրայ պարբերաբար տեղեկութիւն տալ հաղորդել և անոնց պատասխանատուութիւնը ստանձնել առաջի Կեդրոնական վարչութեան Ազգիս։»

Սխալե՞ր է.— բնաւին ո՛չ՝ իւր տնօրինութեան մէջ, թերեւս այո՝ իւր ընտրութեան մէջ։

Սոյն տնօրինութեան մէջ մեր պատուարժան քննադատը Պատրիարքարանի անքաղաքագիտութիւն և ազգային շրջանի մէջ ժողովրդային առանձնաշնորհութեանց բռնաբարում կը նշմարէ, և բացարձակապէս Սահմանադրութեան հակառակ կը դատէ զայն, ինչպէս դտնուեցան կարծողուրիշ պարզամիտներ։ Բայց անկարգութիւնն երբէք զբարեկարգութիւն չ'ծնանիր, և ոչ անիշխանութիւնն զիշխանութիւն. երբ խաղաղութիւն, կարգ կանոն խռովութեանց և շփոթութեանց տեղի կուտան, զօրաւոր ձեռքմբ պէտք է անիշխանական խորխորատէն ժողովուրդն ի վերհանել փրկելու։ Ուստի թող ներէ մեր պարտուարժան դատափետողն որ տարակարծիք դտնուիմ այս մասին իրեն հետ, երբ ժողովուրդ մը անտարբերութեամբ, և անկարգասիրութեամբ բարեկարգութիւնը կը կորուսանէ, այլևս չէ ներելի զնա փրկելու համար իւր առանձնաշնորհութեանց նկատողութիւն ընել, ինչպէս ծովամոյն վտանգեալ մը մահուանէ կորզելու համար չէ ներելի մազերէն կամ որևէ տեղէն բռնել. դուրս քաշելու մասին մտանալ, կամ Անգլիացւոյն ըրածին պէս նախ տեսնել ստուգել թէ ձեռքէն բռնելու մարդն իրեն արդէն ներկայացեալ ծանօթ մարդ է թէ ո՛չ։ Ուստի Ազգ. Պատրիարքարանը ստուգիւ իւր պարտականութիւնը կատարած է հայրարար և քաղաքագիտաբար զեգիպտաբնակ ժողովուրդն արտասովոր, ազդեցիկ և առ ժամեայ միջոցով մը անիշխանական չարիքէ փրկել փութալով, և բնաւ չ'է մեղանչած ընդդէմ սահմանադրական օրինայ։ Բայց ընտրութեանը մէջ, հաւանակա՛ն է որ սխալած ըլլայ։ Սակայն ի՛նչ որ ալ ըլլայ մեր պատուարժան հակառակորդին կարծեաց արժէքը ի մասին ընդունելութեան ազգային ո՛րևէ պաշտօնի՝ վսեմ. Նուպար բաշայի կողմէն, մեծանձնութիւն չէ մէկը դատապարտել առանց դատելու, և վճիռ արձակել առանց կանխաւ գործը տեսնելու ընտրեալ պատուիրակին։

Այստեղ ահա վերոսին իրարու դէմ կուգանք մեր պատուական դատափետողին հետ։

Նա կը կարծէ գիտնալ թէ ես ատ իշխանական բարձի հասած, և շուրջանակի վերընծայեալ յարգական ցոյցերէ պարարեալ մեղկացեալ, կ'սպասեմ անաշխատ և անտարբեր որ Պատրիարքանն ամենայն ինչ տնօրինէ և ես գործադրեմ, և կը թողումոր սահմանադրութիւն և իրաւունք տեղական ժողովրդեան ոտնակոխ լինին. կը սխալի։ Եթէ կը ներէք, յատադրեմ միառմի հակիրճ քանիւք ի՞նչ վիճակի մէջ գտայ և ի՞նչ գործեցի, նկատմամբ տեղւոյս Առաջնորդական վարչութեան, եկեղեցւոյ, վարժարանի, Աղքատաց և մանաւանդ պարտուց, որ ամենէն կարեւորն ըլլալով, իրաւունք ունի յառաջ քան զամենեսին մեզ զբաղեցուցնելու։ Այս թէպէտև տեսակ մը համարատուութիւն է, և չ'է ներելի պաշտօնավարութեան կէս ճանբուն այնմ ձեռնարկել, մանաւանդ առաջի հասարակութեան, երբ դեռ վերբերական իշխանութեան չ'է մատուցեալ ընդհանուր Տեղեկագիր։ Սակայն քանի որ խնդիրը կնճռոտ է, և անուղիղ տեղեկութեամբք և սխալ դատողութեամբք հասարակաց կարծիքն թերևս անգիտաբար ի թիւրն կ'առաջնորդուի, հարկի վերայ կայ եղելութեանց պարփակող քօղն դէթ մէկ ծայրէն վեր առնուլ, և ճշմարտութիւնն ցոյց տալով, ամէն կողմ ազատ կացուցանել թիւր ընբռնումէ, սխալ համոզմանէ և դատավէժ դատողութենէ։ Սկսինք։

1⁰ Պարտք.— պարտուց խնդիրը զարմանալի է և եղական, յատուկ Եգիպտոսի։ Ամէն տեղ ազգային հասարակութիւնք և հատատութիւնք կրնան պարտք ունենալ, բայց տեսնուած կա՞յ տեղ մը որ Արքեպիսկոպոս Առաջնորդ մը իւր վիճակին մէջ ազդ. ժառանգական խնդրոյ մը առթիւ վարդապետի մը հետ կռիւ ընելով, 'ի Պատրիարքարան կոչուի 'ի դատ. և անդ 10 ամսոյ չափ դեգերելով, իւր հակառակորդ կրօնակցին հետ հաշտութեամբ դժտութեան վերջ տալէ յետոյ, վերադարձին՝ իւր բացակայութեան միջոցի համար իրեն փոխանորդ կարգած միամիտ քահանայի մը պաշտօնին վերջ տալէ յառաջ՝ իւր մի քանի մտերիմներէ կազմեալ թաղական՝ խորհրդոյ մ'ատեանը իւր իսկ առաջնորդական վիճակէն 1472 ոսկւոյ գումարմբ պահանջէ, իբր փոխարինութիւն այն ծախուց զոր իբր թէ ըրեր է 'ի Կոստանդնուպօլիս, 'ի Պատրիարքարանն, վիճակայնոյ իրաւունքը պաշտպանելու և իւր առաջնորդութեան կայսերական պերատն առնելու համար. և դրամարկեղ մէջ պատրաստ դրամ չ'գտնուելով՝ տարեկան 10% ոսկոսեօք պարտամուրհակ մ'ատնու իւր փոխանորդին ստորագրութեամբ, և ապա արձակէ զնա 'ի փոխանորդութենէ և անոյնի բազմիլ իւր աթոռը։ Ապա՝ 4 տարի յետոյ Առաջնորդն նոյն պարտամուրհակը օտարահպատակ Պարսկի մ' և Հռովմէական Հայու մը 2000 ոսկւոյ փոխարէն առ երեսս՝ բայց օրինական արարողութեամբ ծախելով, դատ բանալ տայ նոցա առաջի միջազգային դատարանի ընդդէմ իւր՝ իբր Առաջնորդ Հայոց, այլ և դեր իւր՝ իբր պարտապահանջ. և հնարհիւ պաշտպանութեան իւր մտերիմմի քանի Հայոց և անտարբերութեան մնացեալ ժողովրդոյ վիճակին դատը շահի յատուկ իւր անուանատուիրաւառուաց, և վճռոյն դրդագրութիւնն և պահանջից վճարումն ապահովելու համար, իւր իսկ հօտին՝ Եկեղեցւոյ և աղքատաց սեփհական կալուածոց վրայ գրաւադրական (դատական)

արդելք դնել տայ, և տասնեւմէկ տարիան ժամանակամիջոցի մէջ նոյն սկզբնական 1472 անգլիական ոսկւոյ պահանջից ի հաշիւ կալուածական եկամուտներէ առնու մերձ 1300 ոսկւոյ դրամ մը, և 1230 ոսկւոյ դրամ մը եւս արդելքի ներքեւ դնելով թէպէտ ինք չկրնայ գանձել, բայց վիճակին ալ անկարելի քնէ ստանալ, և այսօր դարձեալ պահանջ ցոյց տայ 2100 ոսկւոյ դրամ մը, ինք միշտ վարագուրի ետեւ պահուելով և դրամունք և կողոպուտք անուանատուաց ձեռօք գործադրելով։

Ա՛յս է ահա եգիպտահայոց պարտուց մեծ խնդրոյն վիճակն և էութիւնն. Հիմունքն անօրէն, ծագումն ապօրէն, կարգադրութիւնն օրինաւոր և վճիռք չախչախիչ, ինչպէս կըսէ Պատրիարքարանն։ Զ'եմ կարծեր թէ բնաւ տեղ մը ոյնպիսի եկեղեցութիւն մը տեղի ունեցած կամ կարելի ըլլայ ունենալ. դի Սուքեասեան Մեսրոպ եպիսկոպոսի նման՝որ տխուր դիւցազն է սոյն եղերերգութեան, առաջնորդ կամ մարդ իսկ բարեբախտաբար չատ քիչկըգտնուի և այս տեսակ դատական վճիռ և գործադրական խստութիւն միայն յԵգիպտոս կրնայ ըլլալ. դի ուրիշ հայաբնակ տեղեր, գոհութիւն Աստուծոյ, միջազգային դատարաններ չեն հաստատուած. ուր բաւական է թէ Փաստաբանն ըստ օրինական պայմանայ կարգադրէ և փաստաբանէ հակառակորդիդ դատը, ապահով ես զանի կորուսանելու, թէեւ դատաւորք իսկ համոզեալ ըլլան քու իրաւանց և արդարութեանդ։

Ինչ բրեր է ասոր գէմ Դահիրէի ժողովուրդը.—

Ի սկզբան բաւական ժամանակ անտարբերութեամբ Առաջնորդին ընդ իւր համախոհս վայրավատնութեանց և յափշտակութեանց սոսկ հանդիսաւոր ըլլալէն յետոյ տեսնելով որ մի կողմէն տարեկան 2000 ոսկւոյ մօտ ազգին կալուածական և այլ հասոյթք ամբողջապէս կըվատնուին, կալուածներ ևս կըծախուին, և միւս կողմէն քահանայք և եկեղեցւոյ միւս պաշտօնեայք, դաստուք և միւս գործակալք վարժարանի, աղքատք և Առաջնորդարանի քարտուղարք Հայկազանցիք ամիսներով, տարիներով, առանց ամսականի անխնամ կըձգուին, վերջապէս կըզարթնու, կըշարժի, կ'սկսի բողոքել, վարչական մարմնոյ նորոգութիւն, հաշիւ և համար կըպահանջէ, և երբ տէր Մկրտչեանի քննչութեան շնորհիւ կըյայտնի գահընկէց ընել զԱռաջնորդը, կըդիմէ միջազգային դատարանի՝ մի քանի տարի յառաջ տեսնուած դատին վերաքննութիւն և տրուած վճռոյն բեկումն խնդրելու. այլ աւա՜ղ, օրինական պայմանաժամն անցած ըլլալով, կըմերժուի խնդիրը։ Վերջը աշխարհական տեղակալմբ կարգելով Առաջնորդական աթոռին (ժամագործ Գաբրիէլ էֆ. Գրիգորեան) վերատին դատի կըձեռնարկէ, այս անգամ Մեսրոպ եպիսկոպոսի անուանատու իրաւառուայ դէմ, և կալուածոց վրայ դրուած արգելքները բառնալու համար «պարտքը Առաջնորդարանի՛ն է, բայց արգելքի ենթարկեալ կալուածք աղքատ կտակեալ են» ըսելով, բայց միջազգային դատարանը դարձեալ ի միաս ազգին վճիռ կ'արձակէ, «Աղքատք և Առաջնորդարան միւնոյն վարչական մարմնոյ իրաւասութեան ենթարկեալ են ըստ հայկական Սահմանադրութեան, և դրամարկղ մի է բոլոր կալուածական և այլ ազգային հասութից և ծախուց համար» ըսելով։ Ժողովուրդն ասո՛ր ալ վերաքննութիւն կը պահանջէ, և վճռաբեկ ատեանն Ալէքսանդրիոյ փոխանակ բեկանելու, կը վերահաստատէ զայն վճիռ։ Ա՛յնպէս որ շնորհիւ սոյն դատավարութեանց՝ Մեսրոպ եպիսկոպոսի անկրաւ պահանջն քառեակ վճռռով զօրաւորագոյնս կըհաստատուի, և մէկ կողմէն անուանական պահանջատերք օրքանզօր առուել կը խստացուցեն պահանջողութիւնին, Ազգին բոլոր կալուածները մի զմիոյ կնի դրաւադրական հետամուտութեամբ անդուլ կըհալածեն, և միւս կողմէն մերոնք կ'սկսին յուսահատիլ, և ամենեքին՝մեծ և փոքր, իշխանութիւն համարուողք թէ վարողք, նոյն իսկ եռաստեղեան համաստեղականք յարձակողականէ ի պաշտպանողական կըփոխեն ընթացքնին, և բոլոր զօրութիւն և հնարիմաց ճարտարութիւններն դրաւական արգելքէ հասոյթ փախցունելու վատնելով, կըթողուն որ պարտապահանջից դատական և դրաւադրական հալածումն յառաջ երթայ, և այս անարգել զարգացմամբ կըհասնի այսօրեայ վիճակին։

Ա՛յսօրեայ վիճակը տխուր է. բոլոր կալուածական երկիրներն և շէնքերը դրաւական արգելքով կաշկանդեալ են, ի բաց առեալ մեծ դեռին և մի քանի մանր տուներ, նոյնպէս հին և նոր պահանջք աղքատ՝ ինչպէս նաև ապագայք դրաւադրութեան ենթարկեալ են. և ըստորում Դահիրէի մէջ եկեղեցւոյ հասոյթք աննշան են, և ազգային տուրք չկայ հաստատուած, եկեղեցի, վարժարան, աղքատք, Առաջնորդարան ի չքաւորութեան մատնած են, ունելով հանդերձ այսօր առնուազն 1000 ոսկիէ աւելի տարեկան եկամուտ բերող կալուածներ, զոր նախնի բարերարք պարգեւեր են և վերջին Առաջնորդն դրաւեր է։

Ժողովուրդն այսօր քաջ գիտնալով թէ Մեսրոպ եպիսկոպոսի պահանջն անկրաւ է, և տասնամեայ առաջնորդութեան ժամանակամիջոցի մէջ նա ազգին բոլոր հասոյթներն վատներ և երկո՛ւ կալուածական երկիր ևս վաճառեր և ստակն իւր ամնականայ հաշուեր է, կանխաւ նոյն հողերէն մին իւր՝ և միւսն իւր մօրը անուան արձանագրել տալով, թէպէտև ստակն ազգէ վճարեր է, և նուիրողաց մի քանին դեռ կենդանի են, գիտնալով նաև թէ հրապարակի մրայ երևցող պահանջատերք անուանատո՛ւ են միայն, և կալուածներէն առնուած ստակներն մանուածապատ շրջանով դարձեալ նորին գրպանը կըմտնեն, կըդժկամակի մտքրել անոր հաշիւն և դատական ճնշմանէ ազատիլ, մանաւանդ որ Տ. Մկրտչեանի խուզարկութիւններն Մեսրոպ եպիսկոպոսին՝ պահանջածին կրկնապատիկը առ Դահիրէի ազգ. դրամարկղ պարտք ունենալն հաստատեր են, բայց չդիտեր ի՞նչ ընելիքն ալ. մէկ կողմէն ստակ մը ջեմ տար կըսէ, կըպօռայ, երբեմն նաև կըդրէ՝ համաստեղական ստորագրութեամբ, միւս կողմէն կըվշտանայ տեսնելով որ «չեմ տար» ըսած ստակներն կ'երթան և կ'երթան իւր կեղեքիչ կողոպտիչին ձեռքը, և կը թմբրի կըմնայ։

Ահա այս վիճակին մէջ եկայ ես ի հանդէս, և ինձ օգնական բարեկարգիչ յանձնախումբ մը կազմելէն յետոյ, ահա՛սիկ ի՞նչ բրի այս խնդրոյն նկատմամբ։

Նկատելով որ Դահիրէի բոլոր ազգային խռովութեանց սկզբնապատճառ և մշտատև անբարեկարգութեան աղբիւր Մեսրոպ եպիսկոպոսի ստեղծած պարտքն է, և առանց այս պարտուց խնդրոյն մաքրութեան անկարելի է օ՛րևէ բարեկարգութեան վերահաստատման և յարատևութեան յոյս տածել.

Նկատելով որ Եգիպտոսի մէջ զգացմամբք, խօսքով, բացագանչութեամբ, խմաստակութեամբ, լրագրական անուանարկութեամբ ժողովրդական յուզմամբք պարտքէ չաղատուիր, երբ օտարահպատակ հակառակորդի վիճակեալ է մարդ, և միջազգային դատարանէ դատապարտեալ, այլ պէտք է ստակ վճարել, հնչական մեռաղ կամ համազօր այլ ինչ.

Նկատելով որ թէպէտև ձեռքերնիս պատրաստ դրամ չ'կայ բաւական, և փոխառութիւն մը ընել հա՛րկ է, այսինքն նոր պարտք մը՝ հինը հատուցանելու համար. բայց այս նոր պարտուց թերևս բաւական կըլլայ միմիայն կալուած դրաւական տալ, և թեթևագոյն տոկոս վճարել.

Նկատելով որ թէպէտև մեր պարտքը Մեսրոպ եպիսկոպոսի է անիրաւութեա՛մբ անշուշտ, բայց մեր իսկ անպիտանութեան պարտամուրհակովն հաստատուած, և նա հնարիմացութեամբ զիւր անձն ծածկելով, մեզ երկու օտարահպատակ իրաւառու պահանջատերց դէմ առ դէմ դնելով, և անբեկանելի վճռատուութեան իրաւամբ օժտեալ միջազգային դատարանի Կաւդիոնեան երկճիւղ փայտի մէջտեղ սեղմեր է, որով կը պարտաւորիմք Մեսրոպի ստակ վճարել, թէ և անկէ կրկնապատիկ ունիմք առնելիք, և ստակն յանձնել ի ձեռս երկու անձանց որոց ո՛չինչ պարտիմք, և համոզեալ ենք որ անուանատու են միայն.

Նկատելով որ թէպէտ այսպիսի վիճակէ մ'աղատելու համար որքան քիչ վճարենք, այնքան աղեկ ըրած կ'ըլլանք, բայց որքան չա՛տ ալ վճարենք, դարձեալ աժան ըրած կ'ըլլանք, լաւագոյն է ստակայն իրաւախոհութեան դիմել, հնար եղածին չափ զեղչ մը շահելու համար. և եթէ նա չըյայտնի, յայնժամ դատական միջոցաւ վճարման հոդ տանիլ,

Որոշեցինք նախ քան զամենայն ինչ Մեսրոպ եպիսկոպոսի կատկած պարտուց խնդիրը մաքրել, և ազգային կալուածներն ի դրաւական արգիլմանէ ազատելէն յետոյ մաքրայարդար դեռանի վրայ ամբառնալ նոր վարչական բարեկարգութեան շէնքը։

Ա.յս նպատակաւ նախ դիմեցինք Պարսիկ Մուհամմէտ Աղիզ Հէրաթի և Եուսուֆ Կիւղել Հռոմէական Հայ մեր անուանական պահանջատերայ, որոց առաջինը Անգլիոյ և յետինը Իտալիոյ հըպատակ են, և իրենց պահանջից հաշիւը և վճարման նկատմամբ զեղչ մը խնդրեցինք։ Եուսուֆ Կիւղել էֆ. ամբողջ պարտուց իրր մնացորդ ցոյց տուաւ մերձ 1800 եգիպտական ոսկւոյ դրամ մը, և իրրու զեղչ մինչ 200 ոսկւոյ չնորհ մ'ընելու միտում ցոյց տուաւ, չ'մտնալով սակայն յաւելուլ թէ եթէ Հայկական հասարակութիւնն ժամ մ'առաջ սոյն պարտքն հատուցանելու վճռական միջոց մը ձեռք չ'առնու, ինքն և ընկերն պիտի պարտաւորին գրաւի ենթարկեալ կալուածներէն զանոնք որ բացարձակապէս վաքֆ եղած (կտակեալ) չեն, աճուրդի հանել և վաճառել, որու դատաստանական օրինօք իրաւունք ունենալ կըկարծեն։ Իսկ Մուհամմէտ Հէրաթիի տեղ հայկազուն, լուսաւորչակրօն մեր արենակիցներէն Հարէնց Մարտիկ էֆէնտի մեր դէմն ելաւ, որ Ռուսիոյ հպատակ է, և որ Հէրաթիէն Մեսրոպեան իրաւունքն դատական տարարողութեամբ ծախու առնելով, և 1883 Ապրիլի 18ին հաշիւ տեսնելով և բանած տոկոսի՝ն մայր գումարին աւելցունելով, նոյն թուականէն յետոյ տոկոսեայ տոկոսի՝ պահանջելու պայմանաւ՝ իրր ամբողջ գումարին մնացորդ 2101 և ½ եգիպտական ոսկւոյ գումար մը մեզ ներկայեց իրր իւր և ընկերոջը պահանջը, և բարեկամիմբ միջոցաւ մինչ 300 ոսկի զեղչ ընելու դիտաւորութիւն ցոյց տուաւ՝ եթէ մնացեալն ամբողջովին և անմիջապէս վճարուի։

Սոյն պարագայի մէջ՝ երբ Մեսրոպ եպիսկոպոսի անգթութեան և անուանատուաց խստասրտութեան արդեամբք սրտերնիս ճմլեալ կը մտմտքէր, և ճար մը, հնար մը գտնելու կը տանջուէինք սա . . . խումբին ձեռքէն ճողոպրելու, հնար եղածին չափ քիչ տուժելով, և ահա բաղդը բերաւ դրե՛թէ մի և նոյն ժամանակ մեր ձեռքը յանձնեց 1º. նամակ մը՝ որով Հարենց Գառնիկ 'ի Կ. Պոլսոյ իմաց կուտայ աստ իւր եղբօր Մարտիկին թէ «ինքն և անոր հաւատացուցեր են Սրբազան Պատրիարքն թէ Մեսրոպ եպիսկոպոսի պահանջն՝ իւր անոր ոչ կը պատկանի, և թէ Մարտիկ միւնոյն լեղուն գործածելով ի Գահիրէ պէտք է ջանայ մէկ քանի հարիւր ոսկւոյ զեղչով պահանջն գանձել ազգէն, թէ սոյն զեղչի քանակութեան նըկատմամբ Մեսրոպ եպիսկոպոս պիտի դրէ ուղղակի իրեն. բայց եթէ, կըսէ, կը վախնաս գոլէ՝ բայէն, ամեն բան ձգէ՛ եկո՛. մեզի ո՛չ եպիսկոպոսին գործը պէտք է եւ ո՛չ անոր շահը»։ Եւ, 2º. յայտարարութիւն մը քստորագրեալ Գահիրէի Տէր Կարապետ Քահանայէն, որով սա՛ կը խոստովանի թէ «Մեսրոպ եպիսկոպոսի օրով Հէրաթիի և Կիւզելի առաջին անգամ դատ բացած ժամանակ՝ Մեսրոպ եպիսկոպոս ինքն . . . էֆէնտիի տունը տարեր և անդ առ Լուսիկը առ Դահիրէի ազգ. դրամարկղ պարտք ունենալն հաստատեր են, բայց չդիտեր ի՞նչ ընելիքն ալ. մէկ կողմէն ստակ մը ջեմ տար կըսէ, կըպօռայ, երբեմն նաև կըդրէ՝ համաստեղական ստորագրութեամբ, միւս կողմէն կըվշտանայ տեսնելով որ «չեմ տար» ըսած ստակներն կ'երթան և կ'երթան իւր կեղեքիչ կողոպտիչին ձեռքը, և կը թմբրի կըմնայ։

Ահա այս վիճակին մէջ եկայ ես ի հանդէս, և ինձ օգնական բարեկարգիչ յանձնախումբ մը կազմելէն յետոյ, ահա՛սիկ ի՞նչ բրի այս խնդրոյն նկատմամբ։

Նկատելով որ Դահիրէի բոլոր ազգային խռովութեանց սկզբնապատճառ և մշտատև անբարեկարգութեան աղբիւր Մեսրոպ եպիսկոպոսի ստեղծած պարտքն է, և առանց այս պարտուց խնդրոյն մաքրութեան անկարելի է օ՛րևէ բարեկարգութեան վերահաստատման և յարատևութեան յոյս տածել.

Նկատելով որ Եգիպտոսի մէջ զգացմամբք, խօսքով, բացագանչութեամբ, խմաստակութեամբ, լրագրական անուանարկութեամբ ժողովրդական յուզմամբք պարտքէ չաղատուիր, երբ օտարահպատակ հակառակորդի վիճակեալ է մարդ, և միջազգային դատարանէ դատապարտեալ, այլ պէտք է ստակ վճարել, հնչական մեռաղ կամ համազօր այլ ինչ.

Նկատելով որ թէպէտև ձեռքերնիս պատրաստ դրամ չ'կայ բաւական, և փոխառութիւն մը ընել հա՛րկ է, այսինքն նոր պարտք մը՝ հինը հատուցանելու համար. բայց այս նոր պարտուց թերևս բաւական կըլլայ միմիայն կալուած դրաւական տալ, և թեթևագոյն տոկոս վճարել.

Նկատելով որ թէպէտև մեր պարտքը Մեսրոպ եպիսկոպոսի է անիրաւութեա՛մբ անշուշտ, բայց մեր իսկ անպիտանութեան պարտամուրհակովն հաստատուած, և նա հնարիմացութեամբ զիւր անձն ծածկելով, մեզ երկու օտարահպատակ իրաւառու պահանջատերց դէմ առ դէմ դնելով, և անբեկանելի վճռատուութեան իրաւամբ օժտեալ միջազգային դատարանի Կաւդիոնեան երկճիւղ փայտի մէջտեղ սեղմեր է, որով կը պարտաւորիմք Մեսրոպի ստակ վճարել, թէ և անկէ կրկնապատիկ ունիմք առնելիք, և ստակն յանձնել ի ձեռս երկու անձանց որոց ո՛չինչ պարտիմք, և համոզեալ ենք որ անուանատու են միայն.

Նկատելով որ թէպէտ այսպիսի վիճակէ մ'աղատելու համար որքան քիչ վճարենք, այնքան աղեկ ըրած կ'ըլլանք, բայց որքան չա՛տ ալ վճարենք, դարձեալ աժան ըրած կ'ըլլանք, լաւագոյն է ստակայն իրաւախոհութեան դիմել, հնար եղածին չափ զեղչ մը շահելու համար. և եթէ նա չըյայտնի, յայնժամ դատական միջոցաւ վճարման հոդ տանիլ,

Որոշեցինք նախ քան զամենայն ինչ Մեսրոպ եպիսկոպոսի կատկած պարտուց խնդիրը մաքրել, և ազգային կալուածներն ի դրաւական արգիլմանէ ազատելէն յետոյ մաքրայարդար դեռանի վրայ ամբառնալ նոր վարչական բարեկարգութեան շէնքը։

Ա.յս նպատակաւ նախ դիմեցինք Պարսիկ Մուհամմէտ Աղիզ Հէրաթի և Եուսուֆ Կիւղել Հռոմէական Հայ մեր անուանական պահանջատերայ, որոց առաջինը Անգլիոյ և յետինը Իտալիոյ հըպատակ են, և իրենց պահանջից հաշիւը և վճարման նկատմամբ զեղչ մը խնդրեցինք։ Եուսուֆ Կիւղել էֆ. ամբողջ պարտուց իրր մնացորդ ցոյց տուաւ մերձ 1800 եգիպտական ոսկւոյ դրամ մը, և իրրու զեղչ մինչ 200 ոսկւոյ չնորհ մ'ընելու միտում ցոյց տուաւ, չ'մտնալով սակայն յաւելուլ թէ եթէ Հայկական հասարակութիւնն ժամ մ'առաջ սոյն պարտքն հատուցանելու վճռական միջոց մը ձեռք չ'առնու, ինքն և ընկերն պիտի պարտաւորին գրաւի ենթարկեալ կալուածներէն զանոնք որ բացարձակապէս վաքֆ եղած (կտակեալ) չեն, աճուրդի հանել և վաճառել, որու դատաստանական օրինօք իրաւունք ունենալ կըկարծեն։ Իսկ Մուհամմէտ Հէրաթիի տեղ հայկազուն, լուսաւորչակրօն մեր արենակիցներէն Հարէնց Մարտիկ էֆէնտի մեր դէմն ելաւ, որ Ռուսիոյ հպատակ է, և որ Հէրաթիէն Մեսրոպեան իրաւունքն դատական տարարողութեամբ ծախու առնելով, և 1883 Ապրիլի 18ին հաշիւ տեսնելով և բանած տոկոսի՝ն մայր գումարին աւելցունելով, նոյն թուականէն յետոյ տոկոսեայ տոկոսի՝ պահանջելու պայմանաւ՝ իրր ամբողջ գումարին մնացորդ 2101 և ½ եգիպտական ոսկւոյ գումար մը մեզ ներկայեց իրր իւր և ընկերոջը պահանջը, և բարեկամիմբ միջոցաւ մինչ 300 ոսկի զեղչ ընելու դիտաւորութիւն ցոյց տուաւ՝ եթէ մնացեալն ամբողջովին և անմիջապէս վճարուի։

Սոյն պարագայի մէջ՝ երբ Մեսրոպ եպիսկոպոսի անգթութեան և անուանատուաց խստասրտութեան արդեամբք սրտերնիս ճմլեալ կը մտմտքէր, և ճար մը, հնար մը գտնելու կը տանջուէինք սա . . . խումբին ձեռքէն ճողոպրելու, հնար եղածին չափ քիչ տուժելով, և ահա բաղդը բերաւ դրե՛թէ մի և նոյն ժամանակ մեր ձեռքը յանձնեց 1º. նամակ մը՝ որով Հարենց Գառնիկ 'ի Կ. Պոլսոյ իմաց կուտայ աստ իւր եղբօր Մարտիկին թէ «ինքն և անոր հաւատացուցեր են Սրբազան Պատրիարքն թէ Մեսրոպ եպիսկոպոսի պահանջն՝ իւր անոր ոչ կը պատկանի, և թէ Մարտիկ միւնոյն լեղուն գործածելով ի Գահիրէ պէտք է ջանայ մէկ քանի հարիւր ոսկւոյ զեղչով պահանջն գանձել ազգէն, թէ սոյն զեղչի քանակութեան նըկատմամբ Մեսրոպ եպիսկոպոս պիտի դրէ ուղղակի իրեն. բայց եթէ, կըսէ, կը վախնաս գոլէ՝ բայէն, ամեն բան ձգէ՛ եկո՛. մեզի ո՛չ եպիսկոպոսին գործը պէտք է եւ ո՛չ անոր շահը»։ Եւ, 2º. յայտարարութիւն մը քստորագրեալ Գահիրէի Տէր Կարապետ Քահանայէն, որով սա՛ կը խոստովանի թէ «Մեսրոպ եպիսկոպոսի օրով Հէրաթիի և Կիւզելի առաջին անգամ դատ բացած ժամանակ՝ Մեսրոպ եպիսկոպոս ինքն . . . էֆէնտիի տունը տարեր և անդ առ Լուսիկը «ցենա փաստաբանն ուղղեալ Ի-«տալերէն դիր մը ստորագրել «տուեր է, խաբելով թէ սոյն «դրով փաստաբանն Ալէքսանտ-«բիոյ եկեղեցւոյ դրամարկղէն «3000 ոսկի պիտի բերել տայ «և մեր պարտքերը վճարենք, «ուր ընդհակառակն դրուած է «եղեր թէ (Մեսրոպ եպիսկո-«պոսի պահանջած 1472 ոսկւոյ «գումարն՝ Դահիրէի եկեղեցւոյ «արկեղ պարտքն է, բայց Ա-«ղէքսանտրացի՛ք ևս պարտին «մասնակցիլ վճարմանը)։»

Ինչպէս կ'տեսնենք, սոյն թղթերով բոլորովին մերկապարանոց ըլլալով թէ Մեսրոպ եպիսկոպոսի խաբէբայութիւնն և դատաւորաց՝ հակառակ իրենց համոզման Դահիրէի եկեղեցին դատապարտելնուն պատճառը, և թէ Մարտիկ Հարէնցի և ընկերաց խաբէբայութիւն, և այս խնդրոյն թերն միշտ Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքն ըլլալով, միւսներուն բոլորին ալ պարզ դորձիք կամ առ առաւելն շահակից ընկեր ըլլալն, ուրախապէս ցինք դրկել զանոնք 'ի Կ. Պոլիս՝ ուր Մեսրոպ եպիսկոպոս կը յոխորտար իլլրադրական ասպարէզի և մինչեւ իսկ յ'ազգ. Պատրիարքարանի, և խնդրեցինք որ Կեդրոնական վարչութիւնը իւր ատեանը կոչելով զՄեսրոպ եպիսկոպոս և ընկերութիւն, և խայտառակելով զանիրաւութիւնքն՝ պարտաւորէ մեծ զեղչ մը ընել տալ իւր պահանջից, հնար եղածին չափ դուրս ձգելով անուանատուութեան հին և նոր դեբասանները։

Եւ զայս ընել յաջողեր է ազգային Պատրիարքարանն, 1,000 անգլ. ոսկւոյ զեղչելով պարտուց այսօրեայ մնացորդը՝ 'ի նմա հաշուելով դատական բոլոր ծախքերն, և մեզ թողլով ի՞նչ որ Մեսրոպեան գործակատարք արդիլե՛ր են գրաւադրութեամբ՝ բայց չեն կրցեր գանձել մինչեւ այս տարուան մարտ ամիսն, և պայմանաւ որ Մեսրոպ եպիսկոպոս ինքն վերցունել տայ մեր կալուածոց վրայ դրուած սէքքէսթրօներն, և Դահիրէի դատարանայ միջոցաւ մեզ յանձնել տայ մեր ազատութեան վկայագիրն. և սոյն պայմանօք Մեսրոպ եպիսկոպոսի ստորագրած մուրհակը վաւերացմամբ մեզ դրկեր է։ Վնա՛ս բրեր է, մե՞ղք գործեր է. Մեսրոպ եպիսկոպոսի միջնորդութե՞ն դիմեր է, շնորհ խնդրե՞ր է. չեմ կրնար հասկնալ և կըզարմանամ թէ ի՞նչպէս հասկացեր է մեր պատուարժան հակառակորդը։

Ա.յժմ Մեսրոպ եպիսկոպոս խայտառակեալ՝ ի Պոլիս ստակին կ'ըսպասէ, և մեք գոհութեամբ ասա՛ ստակ դանելու կ'աշխատինք, չ'գիտեմ մեր հակառակորդք ի՞նչ կուզեն. բայց՝ սա՛ յայտնի է որ խոչընդոտ կամին յարուցանել մեր ջանից. և Մեսրոպ եպիսկոպոսէ վրէժ լուծելու դիտամբ, որ իրենց քթին տակ կալուածներն կողոպտեր և զամենն իւր պայուսակը նետեր է, ստակ մը ջ'տանք ըսելով, վերջին իրաւախոհութիւնն ևս ապարդիւն պիտի թողուն և կըրկնապատիկ պիտի վճարեն ապագային։

Աստ մեր պատուական քննադատին մէկ առարկութիւնն եւս դէմ կ'ելնէ. պէտք է անո՛ր ալ պատասխանեմ պարտուց խնդրոյ վախճան տալէ յառաջ։ Ըստ որում Մեսրովպ եպիսկոպոս կասկածելով թէ մի՛ գուցէ իւր պահանջը Դահիրէցիք չ'վճարեն, քանի՛ որ իւր վրայ պարտուց խնդիր մը կայ ծանրացած և դատ և քննութիւն բացուած առաջի մասնախմբի մը յ'ազգային Պատրիարքարանի, պահանջեր է Կեդրոնական վարչութենէն որ «քստակն նախ 'ի Պատրիարքարան ղրկուի, որպէսզի ինքն ևս յանձքն առած պայմանները կատարէ», և ըստ որում Պատրիարքարանը բնաւ խարդաւանաց տեղի չ'ձգելու դիտմամբ մեզ դբերը էր ստակը ղրկել, մեր հակառակորդը՝ առանց գիտնալու թէ ի՞նչ պատասխանած ենք և ի՞նչ է մեր ուրուագիծը ի մասին վճարման սոյն կեղտոտ պարտուց, զոր սակայն հաստատապէս որոշած ենք վճարել, կը նեղսրտի թէ ինչո՞ւ առանց Դահիրէի ժողովրդեան հաւանութեանն անոր դանձուց ձեռք կը զարնենք և Պատրիարքարանի հրամայածը անմիջապէս և առանց պայմանի ղրկելու կը պարտաւորինք։

Ո՛չ, տէր խմբագիր, ո՛չ, Դահիրէի ժողովրդեան կամայն և դանձուն դպած չունինք. ժողովրդեան կամքն իւր ընտրողութեամբն՝ իւր ընտրելոց կանչնի, և դանձն ասոնք կրնան յանձանձել։ Այժմ դանձ չ'կայ, պարտք կայ. և ընտրեալներ գտնելու համար կ'փափաքիմ նախ պարտքը մաքրել և ապա ընտրութեան ձեռնարկել. եթէ յաջողինք, մաքրեալ և պատրաստեալ գետնի մը վրայ չէնք պիտի բարձրացուցնենք, համոզուած ըլլալով որ նորահաստատելի վարչութիւնն գոհունակութեան քըուէ պիտի տայ անոնց զորս այսօր. եռաստեղեանք դժգոհութեան ցոյցեր և անուանարկութեան փորձերով կ'ուզեն պախարակել։

Ի վերջ բանիս, կաղաչեմ ձեր ազնուութեան որ նամակագիր հակառակորդայ մերոց իմաց տայք թէ Թէրցէմանը-Էֆքեար՝ մեր ազգային պաշտօնական աղդարարը չէ, և չէ՛ բանաւոր և ոչ պատուաւոր պարզ լրագրական հրատարակութեան մը, ճըշդիմ քննադատութեամբ հասարակայ կարծեաց մոլորման տեղի տալ։

Ն. Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

. . . Խմբագիր Արշալոյս լրագրոյ.

Պատուական լրագրոյդ 1228 թըուոյն մէջ Այտընէ մի նամակ կարդացի, որուն մէջ յանուն արդարութեան մի քանի կէտերու թերութիւնները կը փութամ յաւելցնելու։

Հանգուցեալ կուսակրօն քահանայի յուղարկաւորութեան հանդիսին թէպէտ ութը քահանայ ներկայ էին, բայց ասոնց չորսը հանգուցելոյն ազգակից Մխիթարեանք, և միւս չորսն ալ լատին էին։

Նոյն գիշեր Մխիթարեանք մինչդեռ իրենց վանքի մէջ կորուսեալ եղբօր անագորոյն մահուան վերայ կ'ողբային, լատինք կուսանաց վանքին մէջ նամակագրին նկարագիրը կը կատարէին, և իրենց խաղերուն մէջ, նոր թարմ ունենալով, Մխիթարեան հայր Փիլիպպոսի ձայնի նման ձայներ ձևացընելով պոռալ և ըսել էրմէ, Պոռխոսմէ, Ասէ Ասպասաք և այլն։

Ասկէ սա կը մակաբերեմք թէ, լատին քահանայք և կուսանք, իրենց պարպած գաւաթներու ժամանակ, զուարճալիք եղած էր Հայ արարողութիւնը։

Խմբագիր Տէր, նամակաւս չեմորուզեր որևէ դիտողութիւններ ընել, վասնզի այնպիսիք նոցունց համար նոր և հաղուադէպ չ'են, այլ պաշտպանել Մխիթարեան հայրերը, որոնք ոչ ներկայ էին սոյն հացկերութիւն, և ոչ ալ սովորութիւն ունին իրենց վանքէն դուրս որևէ տեղ մի ճաշելու։

Ուստի յանուն արդարութեան հաճեցէք ներկայս հրատարակելու, ձեր պատուական թերթին մէջ, որուն համար մնամ շնորհապարտ։

Այտըն, 26 Սեպտ. 1885

Ց. Մ. ԵԱՋՃԵԱՆ

Առաջին անգամ չէ դժբաղդաբար որ կրօնի ներկայիչներու կողմէ ասանկ անվայել և դատապարտելի վարմունքներ տեղի կունենան, ի վնաս նոյն իսկ կրօնի՝ որ իր յարդն ու նուիրականութիւնը կը կորսնցունէ մարդկութեան առջեւ։ Մենք թէպէտ չենք զարմանար, որ այդ վերապատուելի կամ գերապայծառ լատին հայրերը՝ իրենց եկեղեցւոյ պատիւ բերող իրողութեան մը հեղինակներն հանդիսացէր են, այո՛, չենք զարմանար, որովհետեւ դարերէ ի վեր իրենց գործոց և գործողութեանց նկարագրին լաւ տեղեակ ըլլալու դժբաղդութիւնն ունինք, բայց կը ցաւինք որ իրենց այդ ողբերգա — կատակերգութեան ներկայացման համար ձախող և անպատշաճ տեսարան մը ընտրեր են, այսինքն այնպիսի քաղաք մը՝ որու հայ ժողովրդեան քաղաքակրթական աստիճանն համեմատաբար նուազ է, և հետեւաբար կրնար դէշ հետեւանքներ ծագիլ։ Ուստի, այս եղելութեան մէջ եթէ գոհ ըլլալու կէտ մը կայ, այն ալ Այտընի մեր հայ հասարակութեան ծանր ընթացք մը բռնելով, առանց կարեւորութիւն չ'տալն է։ Եկեղեցութիւնը թէպէտ ըստ ինքեան աղգանախատ և գրգռիչ բնութիւն մը ունի, բայց ուրախ ենք որ Այտընի հայ ժողովուրդը, ծանր պատահարի մը տեղի չէ տուէր, անտարբեր մնալով քանի մը անխոհեմ կրօնաւորներու վարմունքին։ Եւ այս է ահա որ առիթ կուտայ մեզ ըսելու թէ, այդ գերապայծառները՝ օտարին անձնասիրութիւնը վիրաւորող և նոյն իսկ վիշտն ու գրգիռը հրաւիրող այդ կատակերգութիւնը ներկայացունելու համար լաւ թատերաբեմ մը չեն ընտրեր իրենց։

Վստահ ենք որ, տեղւոյս լատինաց գերապատիւ Առաջնորդ, Մօնսինեօր Թիմոնի արքեպիսկոպոսն այս եղելութիւնն ստուգելով, արժանի և վայել պատիժ մը կը անօրինէ կրօնք ծաղրող այդ կրօնականաց։

Պէրլին, 5 Հոկ. — Կիլիոմ կայսրը երկար հեռագիր մը ղրկեց ի Մատրիտ առ Ալֆոնս թագաւոր, ուր ցաւակցութիւնն կը յայտնէ այն նախարարաց համար որ Ն. Վեհափառութիւնը (Ալֆոնս թագաւորը) կրեց Բարիզէն անցած ատեն։ Սոյն հեռագրին մէջ, Գլանիոյ կայսրը կը հաստատէ սակայն թէ, այդ նախատինքը աւելի իր (Կիլիոմ կայսեր) դէմ ուղղուած էր, քան թէ նորին Վեհափառութեան (Ալֆոնս թագաւորի) դէմ։

—

Մատրիտ, 4 Հոկ. — Զրոյց կայ թէ Սպանիա նոթա մը պիտի ղրկէ Գաղղիոյ կառավարութեան Բարիզի պատահարաց առթիւ։

—

Բէթերզպուրկ, 4 Հոկ.— Ռուս կառավարութիւնը գինուորական օրէնքն յայտարարեց Քաթէրինոսլավի մէջ, տեսնելով որ տեղւոյն ժողովուրդը նորէն թշնամանքներ ըրաւ Հրէից։

ԴՐԱՄԱԿԱՆ

	քամիս	թարիֆա	ողջ
Արծաթ մէճիտիէ	23,15	25,05	20
Ոսկի օսմանեան	125-124½	135,26	107,99
Սթերլին	137,	148,25	118,36
Ոսկի դաղղիական	109,50	118,49	94,60
Վեցնոց	101,75		
Հինգնոց	—		
Մէթալիք	63,25		
Թղթադրամ	1000		

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պ. Յ. Պէրպէրեան պատիւ ունի ծանուցանել հասարակութեան որ թէ տախտակի և թէ մետաղներու վրայ ամեն տեսակ ՓՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ընելու պատրաստ է աժան գիներով։

Կը տպէ նաև ԱՅՑԵՑՈՒՄՍԵՐ, հարսանեաց, յուղարկաւորութեան հանդէսի ևն ՀՐԱՒԻՐԱԳՐԵՐ, թէ մեծ և թէ փոքր ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԸՆԿԱՎԱԳԻՐ, ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ, նամակի ՎԵՐՆԱԳՐԵՐ ևն ևն։

Կը չինէ նաև պատերու վրայ զանազան նկարներ, և խանութներու վրայ կախուած նշանաբաններ և ապակիներու վրայ զանազան տեսակ գրերով անուններ ևայլն։

Պէտք ունեցողը կրնայ դիմել Սէվրի Խան, վերի յարկ թիւ 17 Լրագրոյս սենեակը։

LONDON & LANCASHIRE

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՍԿԻ 1,852,000

ԴՐԱՄ ԱԴ. ՊԱՀԵՍՏԻ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 232,918

ԼՕՆՏՕՆ ԵՒ ԼԱՆԳԱՇԱՅՐ

ՀՐԴԵՀԻ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն ընկերութիւնը որ հաստատուած է 1862ին կապահովէ միմիայն հրդեհի վտանգներու դէմ։

Հատարակայ շէնքերու համար 0/0 20 զեղջ կը ելլայ։

Ընդհանուր գործակալք և փոխանորդք Զմիւռնիոյ և Վիլայէթին միւս քաղաքաց համար։

ՖՐԱՆԿԵԱ և ԶԱՄԱՔՕՊՈՒԼՕ
FRANGHIA et ZAMACOPOULO

Գրասենեակ Եուվան օղլու խան թիւ 3 Այի-եօրկիի մօտ։

Ապահովուիլ ուզողք կրնայ դիմել նաև Բուպկիէ Պէտէ-թէն Յ. Դերձակեան եղբարց գրասենեակը։

ՊԱՇՏՕՆԱՏՈՒՆՔ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆՑ

ՀՐԴԵՀԻ

QUEEN INSURANCE COMPANY

ԹԱԴՈՒՀԻ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԻՎԸՐՊՈՒԼԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ

Դրամագլուխ 2,000,000 Անգլ. ոսկի

ԾՈՎՈՒ

RELIANCE MARINE INS. Co. Ld.

ԾՈՎԱՅԻՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԼԻՎԸՐՊՈՒԼԻ

Դրամագլուխ 400,000 Անգլ. ոսկի

Սոյն ընկերութիւնք Փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքաց Քարամանիոյ Սուրիայի, Արշիպէղեան կղզեաց, Ռումելիի և Յունաստանի մէջ ճիւղեր հաստատած են։

Կեդրոնական Պաշտօնատուն

Ֆրանկայ Թաղ Քոչնօրուլոյի ֆէրիանէն վերի յարկը թիւ 2 և 3

Ընդհանուր գործակալ
ՅՕՆ Ա. Ա. ԿՈՒ

ԳՐԱՍԵՆԵԱԿ

Բէշիմալճիլար պաշի Սէֆէրեան խան վերի յարկը թիւ 3 մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել ընկերութեան փոխ գործակալ Յ. Կ. Հիւսնեանի վերնակալ խանին քով Եսայեաններուն մաղազան։

THE COMMERCIAL UNION

ԳՕՄԷՐՍԻԱԼ ԻՒՆԻՕՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ՍԹԷՐԼԻՆ ՈՍԿԻ

Այս Ընկերութիւնք հրդեհի դէմ կ'ապահովէ իզմիրի և շրջակայ գիւղերուն մէջ, շէնքեր, կահկարասիներ, ապրանքներ, կալուածներ, գործարաններ ևայլն։

ԳՕՄԷՐՍԻԱԼ ԻՒՆԻՕՆԸ միւս բոլոր ընկերութեանց տուած առաւելութիւնները կուտայ իրեն ապահովուողներուն։

Վճարելիք տուրքերը մանաւոր պայմանագրութիւնով մը այս քաղաքս գտնուող միւս անգլիական ընկերութեանց վճարած տուրքերուն հաւասար են։

Վարը ստորագրողները արտօնութիւն ունին այս տեղ Ընկերութեան դէմ որևէ գանգատի գոհութիւն տալու։

ԳՈՐԾԱԿԱԼՔ
RALPH et JOHN GOUT
ՌԱԼՖ և ՅՕՆ ԿՈՒ